ԿԵՆՏՈՆԻ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ

Տիգրան Հայրապետյան

ԱՆԱՊԱՏԻ ՀԱՅՐ ՏԱՐԻ

Քաղաքագիտական վերլուծություններ

ՀԱՏՈՐ 4

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0
Հ 300

Հ 300 Հայրապետյան Տիգրան
Անապատի հազար տարի: Քաղաքագիտական վերլուծություններ
/ Տ. Հայրապետյան.- Եր.: Newmag, 2023.
ՀԱՏՈՐ 4.- 520 էջ:

Տիգրան Հայրապետյանի քաղաքագիտական վերլուծությունների չորրորդ հատորում մեկտեղված են հոդվածներ, որոնցում հեղինակն ապշեցուցիչ ճշգրտությամբ դեռ 1990-ականներին ախտորոշել էր Հայաստանին սպառնացող ներքին ու արտաքին վտանգներն ու կանխատեսել հնարավոր աղետները: Այս հատորում Տիգրան Հայրապետյանը բարձրացնում է նորանկախ Հայաստանի հիմքերին առնչվող մտահոգիչ բազմաթիվ հարցեր՝ 1990-ականների սկզբին ձևավորված պետական կառավարման համակարգից մինչև ազատության ու պատասխանատվության համաչափ ընկալման կարևորություն:

Առաջին երեք հատորներում հավաքված նյութերում հեղինակը ներկայացնում էր Հայաստանի ու տարածաշրջանի խնդիրները, աշխարհաքաղաքական կենտրոնների հավակնությունները և այդ գործընթացների մեջ մտնող Հայաստանի դերը: Նա տալիս էր «Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար ի՞նչ պետք է անել» հարցի պատասխանը: Այս հատորում հեղինակը վերլուծում է Հայաստանի հնարավոր հեռանկարները՝ դրանք դիտարկելով պատերազմի ու խաղաղության, ժողովրդավարության ու բռնապետության հակադրությունների համատեքստում:

Գրքում հավաքված հոդվածներն ու վերլուծությունները խիստ արդիական են հատկապես մեր բարդ ժամանակներում:

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0

Գիրքը հրատարակվել է Տիգրան Հայրապետյանի
արևելագետ ընկերների աջակցությամբ:

ISBN 978-9939-967-16-5
Տիգրան Հայրապետյան «Անապատի հազար տարի» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության իրավունքները պատկանում են
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին և Տիգրան Հայրապետյանի մտավոր սեփականության
իրավատեր Նազենի Ղարիբյանին:

Գլուխ 3 **Երբ արքան մերկ է** 97
Ոչ զուտ փիլիսոփայական երկխոսություն 97
Իսկ ո՞վ է պաշտպանելու ազգային շահերը 100
Հայաստա՛ն, յո՞ երթաս 106
Ծուռ հայելիների թագավորությունում 118
Արքայական գամբիտ 127
«Գորշ կարդինալի» հաղթարշավը 136
Նախագահի աշունը 140
Դաշնակցության փուշն ամբողջատիրության
կանաչ ճանապարհին 152
Ռուսները նորից խաբեցին 158
Արքայական ցուգցվանգ 166

**Մաս II Դիտարկումներ պատերազմի
և խաղաղության սահմանագծից** 187

Նախաբան 189

Գլուխ 1 **Հայկական պետականության տվայտանքները** 191
Դաշնակները կրկին պետք են 191
Զգուշացե՛ք ներքին արնաթողությունից 199
Չկայացած պետականության տվայտանքները 201
Իշխանության լեգիտիմության վերականգնման հրամայականը ... 207

Գործող նախագահի անձը վտանգված է,
կամ հայերի ինչին է պետք հողը 220
Համազգային անհեթեթության էջերից 225
Ֆրուստրացիոն «իրականությունաստեղծման» ազգային կերպը .. 230

Գլուխ 2 **Մի՛ տարեք մեզ ի փորձություն** 236
Դամոկլյան սուրը՝ լեզվաբանական աճպարարության տեսքով 236
«Ազգային իշխանությունների չեզոքացման» մեկնակետ 240
Գումարելիների տեղերը փոխելիս 253
«Պատերազմ թե՞ խաղաղություն» երկընտրանքի մասին 262
ՀՅԴ. կասեցումից վերականգնում 268
Կրկին «Պատերազմ թե՞ խաղաղություն» երկընտրանքի շուրջ 282
Մի՛ տարեք մեզ ի փորձություն 287

Գլուխ 3 **Coup d'Etat** 301
Coup d'Etat-ի թավշյա դրսևորումների վտանգը 301
Հայաստանում հեղաշրջման
իրականացման տարբերակների շուրջ 304
Ռուսական ռուլետկա հայկական ոճով 327
Երկար դանակներ հայկական կարճամտության կոկորդին 334
Հայրենասիրական ամբոխվարությունից անդին 341
Դաշնակներին կրկին խաբեցին 345
«Հայի վերջին խելքը» կամ ինչու հեռացվեց Տեր-Պետրոսյանը 349
Խռովությամբ Լեռնային Ղարաբաղը հնարավոր չէ պաշտպանել 354

Գլուխ 4 **The Show Must Go On** 365
Հայաստանում համայնավարական ռևանշի վտանգը 365
Իշխանություն փոխեմ սահմանադրական ճանապարհով 370
Ռոբերտ Քոչարյանը՝ ՀՀ բազիլեոս բազիլեուս,
պոնտիֆիկուս մաքսիմուս 373
The Show Must Go On կամ հերթական հեղաշրջմանն ընդառաջ 377
Վարչակարգի վերջին հույսը խորհրդարանը ցրելն է 379
Ներազգային պառակտման շեմին 382
Մոռանալ Հերոստրատին կամ վարչակարգի անկումը՝
օրվա հրամայական 386

Մաս III Զոհ չեմ ուզում ես, այլ ողորմածություն 399

Նախաբան 401

Գլուխ 1 **Երբ տեռորը բացել է դուռդ** 403
Բորենիների ժամը 403
Դատապարտվածների շուրջպարը 406
Կրկնակասեցման անգոլական նախադեպը 412
Գաղտնի գործակալների վերացումը ցավ չի պատճառում 416
Երբ տեռորը բացել է դուռդ 419
«Արմենթելի» գործի հնարավոր մութ անկյուններից 423

Գլուխ 2 **Ընդդեմ նոր սպանությունների՝**
հանուն արդար ընտրությունների 430
«Երկրապահի» գորդյան հանգույցը 430
Ինքնարժևորման բարդույթ
կամ լիբերալներն ընդդեմ լիբերալների 434
Դավադրության որոգայթներում 440
Ինքնասպանության մեխանիկան 445
Անմեղսունակության կանխավարկածը 450

Գլուխ 3 **Մարդիկ չկա՞ն…** 455
Անապատի հազար տարի 455
Վերջին մարդու իշխանությունը 458
Եթե կույրն առաջնորդի կույրերին 467
Մեր ու մեր միջև 471
Դու ինձ չես հավատում 481
Հիմարների հայկական նավը. առաջին մաս (անավարտ) 483
Հիմարների հայկական նավը. երկրորդ ընթերցմամբ 496
Խղճի խայթիկ 499
Մարդիկ չկան 507

Կրակ **Եթե մոմը սեղանի տակ չես պահում** 512

Մաս I

ՀԱՅԱՍՏԱ՛Ն, ՅՈ՞Ւ ԵՐԹԱՍ...

Նախաբան

Աշխարհի մեկ առանձին վերցրած երկրում անբարոյականության և մարդկային ստորին կրքերի շահարկման հեղհեղուկ հենքի վրա բնականոն զարգացման հեռանկարներ երաշխավորող պետականության կայացման հերթական փորձը գլխովին տապալվեց՝ փլատակների տակ առնելով նորօրյա այն կուռքը, որ հորջորջվում էր «ժողովրդավարություն»: Ազատականության արևմտյան ընկալման ամենաայլասերված տարբերակի և արևելյան բռնապետության գերադրական նկրտումների խաչասերումից ծնվեց հրեշը՝ հայաստանյան տիպի ժողովրդավարությունը, որն անսանձելի է դարձել անգամ նրա ստնտու քաղաքական այրերի համար: «Այսպես պետականություն չի կայանում, պարոնա՛յք». սա է եղել մեր նախազգուշացումը տարիներ շարունակ, իսկ այսօր արդեն՝ դատավճիռն այն համակարգի, որ հայ հասարակությանն է մատուցվում իբրև կայացած պետականություն՝ իր էությամբ խիստ հիշեցնելով «հաղթանակած սոցիալիզմի դրախտը»:

Իրականում, հակաժողովրդավարության հաղթարշավը երկրում սկսվել է շատ ավելի շուտ՝ արտահայտվելով ինչպես իշխանությունների, այնպես էլ քաղաքական կուսակցությունների կաղապարացման, նրանց ներսում անհանդուրժողության աճի, անբարեհույսների նկատմամբ զտումների կիրառման և այլ ձևերով: Բռնապետության միտումի դրսևորումները Հայաստանում ոչ միայն իշխող ընտրախավի, այլև

քաղաքական բոլոր ուժերի գաղափարական ճգնաժամի և ստեղծագործ բարենորոգչական մտքի բացակայության հետևանքն են: Իրավիճակը, ազգային շահերն ու ազգային անվտանգությունը պահանջում են, որ հանրապետությունում վերականգնվի բազմաբևեռ քաղաքական դաշտ՝ ուժեղ իշխանության կողքին ազդեցիկ ընդդիմության առկայության մոդելով: Նախագահը պետք է թեկուզև մեկ, բայց հաղթելու ռեալ հնարավորություններ ունեցող մրցակից ունենա: Իսկ այն ուժերը, որոնք ևս կկիրառեն «մեր դեմ խաղ չկա» տխրահռչակ մեթոդը, պատասխանատվություն կկրեն թե՛ սեփական և թե՛ ազգային իղձերի գերեզմանափորի դերը ստանձնելու համար:

«Գնացե՛ք, հայտնե՛ք Հռոմի ժողովրդին ուրախալի լուրը, որ ես նրան եմ վերադարձնում երկար սպասված ազատությունները՝ դրանից բխող ամբողջ պատասխանատվությամբ հանդերձ». կարծես մոտավորապես այդպես է հնչում Կալիգուլայի ողջույնը հռոմեացիներին, համենայն դեպս՝ Քամյուի մատուցմամբ: «Ազատությունը պատասխանատվություն է պահանջում» արտահայտությունն այն աստիճան ծեծված է և բանալ, որ ցանկացած մարդու իրավունք է տալիս չգիտակցել նրանում խտացված իմաստությունը: Հայ հասարակությունը թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում այնքան բուռն էր ձգտում ազատության, որ ընթացքում իսպառ մոռացության մատնեց ազատության պարտադիր ուղեկցորդ պատասխանատվությունը:

Գլուխ I

Երրորդ աշխարհի ուրվականը

Փոքր ժողովուրդը միջազգային հանրության դատի առաջ

Եվրոպայի ու Միջին Արևելքի քաղաքական պատմությունը միշտ զարգացել է հզոր տերությունների վերահսկողության տակ՝ բացառությամբ այն հազվադեպ և կարճատև փուլերի, երբ անիշխանությունը համակել է աշխարհամասի մեծ տարածքները՝ պայմաններ ստեղծելով առանձին ժողովուրդների անկառավարելի ինքնադրսևորման համար: Վերջին երկու հարյուրամյակներում իրադարձությունների զարգացման և կառավարելիության համակարգվածության աստիճանը միշտ բարձր է եղել և հակում ունի պահպանելու իր կայունությունը: Ինքնագործունեության հնարավորությունն առավելագույնս սահմանափակված է, և պետք է համաձայնել մեր երկրի ղեկավարի այն տեսակետի հետ, որ Հայաստանը չի կարող ինքնագլուխ, կամային որոշումներով իրականացնել այն, ինչը վերջին տասնամյակներում արտոնվել է միայն բացառիկ երկրների. ասենք՝ Թուրքիային՝ Կիպրոսի խնդրում, Իսրայելին՝ արաբական պետության տարածքներում: Բայց էությամբ ճակատագրապաշտական և խիստ վտանգավոր այն հետևությունը, որ արվել է նման

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark